ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2023թ. հունվարի 26 N 19-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ, ՏԱՐԵՐԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ԿԱՆԽՄԱՆ, ՎՏԱՆԳԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15–րդ հոդվածով՝

*որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում 2023 թվականի ընթացքում արտակարգ իրավիճակների, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման վտանգի նվազեցման և դրանց հետևանքների վերացման նպատակով ստեղծել հանձնաժողով՝ ըստ հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

X

VERIFIED OCSP 2/1/2023 17:59:41 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457 Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2023թ.
հունվարի 26 N 19-Կ
որոշման

Կազմ

ՀՀ Արագածոտնի մարզում 2023 թվականի ընթացքում արտակարգ իրավիճակների,տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման վտանգի նվազեցման և դրանց հետևանքների վերացման հանձնաժողովի

Է. Փարվանյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալ / հանձնաժողովի նախագահ /

Յու.Ազատյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Թ.Թովմասյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ

Կ. Հովսեփյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինասատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Ա.Ավագյան- Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության մասնագետ

Հ.Մուրադյան – ՆԳՆ ՓԾ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության Արագածոտնի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, փ/ծ մայոր /համաձայնությամբ/

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի գլխավոր քարտուղար**

ПОДПИСЬ
X
ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144

**Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2023թ. N 20-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 3-րդ մասով, 17-րդ հոդվածի «ե» կետով, «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգը և նրանց հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրպետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N 992-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2022 թվականի փետրվարի 3-ի N 129-Ն որոշման հավելված N 1-ի 4-րդ կետի «1»-ին ենթակետով և հիմք ընդունելով «Նոր Երզնկայի առողջության առաջնային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ ՊՈԱԿ) տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի 2023 թվականի հունվարի 13-ի գրությունը, որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Նոր Երզնկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ կանոնադրության III գլխում կատարել հետևյալ փոփոխությունները.

   ա) 22-րդ կետի «մանկավարժական» բառից հետո լրացնել ստորակետ կետադրական նշանով և «մասնագիտական (բժշկական)» բառերով

բ) 23-րդ կետի 5-րդ ենթակետի «բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ» նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ՝ «պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացում է հաշիվներ»:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Նոր Երզնկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարին՝ իրականացնել սույն որոշմամբ հաստատված կանոնադրության փոփոխության պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվա հաջորդ օրվանից:

X

VERIFIED OCSP 1/30/2023 16:40:11 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 փետրվարի 2023 թվականի N 22-Ա

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝

**որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 31 քաղաքացիների հատկացնել 850000/ ութ հարյուր հիսուն հազար / դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստին՝ հանձնարարել ՖՍՏՉ վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով, 5 օրյա ժամկետում կատարել գումարի վճարում՝ բանկին փոխանցելու միջոցով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/2/2023 11:48:09 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի
2023թ.-ի փետրվարի 1-ի N 22-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Բնակավայր | Գումարը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Բենիկ Գրիգորյան | Օշական | 30000 | |
| 2 | Գոհար Հակոբյան | Աշտարակ | 20000 | |
| 3 | Հրաչիկ Սիմոնյան | Ցամաքասար | 30000 | |
| 4 | Հրանուշ Գասպարյան | Վերին Բազմաբերդ | 20000 | |
| 5 | Սվետլանա Քասյան | Աշտարակ | 20000 | |
| 6 | Սեդա Ղափանցյան | Աշտարակ | 20000 | |
| 7 | Կամո Եղիկյան | Արագածավան | 30000 | |
| 8 | Մարինե Մխիթարյան | Սասունիկ | 25000 | |
| 9 | Կարեն Առաքելյան | Աշտարակ | 20000 | |
| 10 | Աշխեն Շուխյան | Աշտարակ | 30000 | |
| 11 | Լիլիթ Ավետիքյան | Աշտարակ | 25000 | |
| 12 | Սիրուշ Իսպիրյան | Աշտարակ | 30000 | |
| 13 | Նուբար Մոսրոպյան | Նոր Երզնկա | 40000 | |
| 14 | Զարուհի Ֆրանգուլյան | Աշտարակ | 25000 | |
| 15 | Ժանետա Սաֆարյան | Աշտարակ | 25000 | |
| 16 | Սուսաննա Ավդոյան | Ալագյազ | 25000 | |
| 17 | Ժենյա Մկրտչյան | Աշտարակ | 30000 | |
| 18 | Թամարա Ռուստոմյան | Աշտարակ | 20000 | |
| 19 | Արեգնազ Խաչատրյան | Ապարան | 25000 | |
| 20 | Էմմա Ավանեսյան | Աշտարակ | 50000 | |
| 21 | Գևորգ Հարությունյան | Կոշ | 20000 | |
| 22 | Հարություն Համամջյան | Ապարան | 30000 | |
| 23 | Ջուլիետա Գասպարյան | Կարբի | 20000 | |
| 24 | Սանդուխտ Գալստյան | Մաստարա | 20000 | |
| 25 | Լուսինե Մանուկյան | Բազմաղբյուր | 30000 | |
| 26 | Համլիկ Ապիկյան | Ոսկեհատ | 30000 | |
| 27 | Անդրանիկ Դաղբաշյան | Աշտարակ | 30000 | |
| 28 | Մարինե Սարգսյան | Աշտարակ | 25000 | |
| 29 | Գայանե Մնացականյան | Աշտարակ | 50000 | |
| 30 | Արիստակես Գևորգյան | Բերքառատ | 30000 | |
| 31 | Գայանե Մարգարյան | Աշտարակ | 25000 | |
| | | | 850000 | |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2023թ. փետրվարի 3 թիվ 23-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 18-Ի ԹԻՎ 99 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով **որոշում եմ.**

«Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում արտաընդերային ճանապարհով փոխանցվող վիրուսային հեպատիտների կանխարգելումն ապահովող մասնագիտական հանձնաժողովի փոփոխված կազմը հաստատելու մասին» ՀՀ Արագածոտնի մարզպետի 2021թ.-ի մայիսի 18-ի թիվ 99 որոշման հավելվածում «Ս.Ավագյան» բառերը փոխարինել «Ա.Ղուկասյան» բառերով:

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/3/2023 16:46:21 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2023թ. փետրվարի 6 -ին, N 24 -Ա
ք. Աշտարակ

## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ կառավարության 16 նոյեմբերի 2006 թվականի N 1708-Ն որոշման N 4 հավելվածի 6-րդ կետով՝ որոշում եմ 2023 թվականի պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ծրագրերով կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրություն կատարելու նպատակով ստեղծել մշտադիտարկման աշխատանքային խումբ, հետևյալ կազմով՝

Հ.Գույան - ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ /աշխատանքային խմբի ղեկավար/

Ռ. Թադևոսյան - ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական

Հ.Ստեփանյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

Ն.Գալստյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

Գ.Պողոսյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ

Ա.Միրզոյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ

Ա.Ավագյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի մասնագետ

Ա.Մանուկյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ

- Աշխատանքային խմբի ղեկավարին՝

Սուբվենցիայի ծրագրերի ընթացքի՝ մրցութային գործընթացի, պայմանագրերի կնքման, փաստացի կատարված աշխատանքների մշտադիտարկման և վերջնական արդյունքների մասին պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

Invalid signature

X

VERIFIED OCSP 2/6/2023 17:03:11 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ